

016: 1φ  
Մ-76



ՀՐԱՉԻԿ ՄԻՐԶՈՅԱՆ  
ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2010

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
Б И Б Л И О Т Е К А И М. САРКИСА И МАРИ ИЗМИРЛЯНОВ  
ОТД. СТАРОПЕЧАТНЫХ И РЕДКИХ КНИГ И ЛИТЕРАТУРЫ ИСКУССТВА**

**SARKIS AND MARIE IZMIRLIAN LIBRARY OF  
YEREVAN STATE UNIVERSITY  
DEPARTMENT OF RARE, OLD-PRINTED AND ART LITERATURE**

**ГРАЧИК МИРЗОЯН  
БИОБИБЛИОГРАФИЯ**

**HRASHIK MIRZOYAN  
BIOBIBLIOGRAPHY**

**ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ  
ЕРЕВАН - 2010  
YEREVAN STATE UNIVERSITY PRESS  
YEREVAN - 2010**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՍԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ ԱՆՎ. ԳՐԱԴԱՐԱՆ  
ՀՆԱՏԻՊ, ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

# ՀՐԱԶԻԿ ՄԻՐՋՈՅԱՆ ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ – 2010

ՀՏԴ 01 : 1/14 (479.25)  
ՊՄԴ 91.9 : 87 + 87 (2 Հ)  
Ս 763

Կազմող՝ Հասմիկ Հայրապետյան  
Խմբագիր՝ Սեյրան Ջաքարյան


Составитель: Асмик Айрапетян  
Редактор: Сейран Закарян

Ս 763 Հրաչիկ Միրզոյան (կենսամատենագիտություն) /  
Կազմ.՝ Հ. Գ. Հայրապետյան; Խմբ.՝ Ս. Ա. Ջաքարյան. -  
Եր.: ԵՊՀ հրատ., 2010. - 96 էջ:

ISBN 978-5-8084-1260-6

ՀՏԴ 01 : 1/14 (479.25)  
ՊՄԴ 91.9 : 87 + 87 (2 Հ)

© ԵՊՀ հրատարակչություն, 2010 թ.  
© ԵՊՀ Ս. Ա. Ս. Իզմիրլյանների անվ.  
գրադարան, 2010 թ.



ԵՊՀ Գրադարան



SU0180046

## ԿԱԶՄՈՂԻ ԵՎ ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Պրոֆեսոր Զ. Ղ. Միրզոյանի կենսամատենագիտությունը բաղկացած է երկու հիմնական բաժնից:

Առաջին բաժնում ընդգրկված են Զ. Միրզոյանի՝ գիտնականի և մարդու նկարագիրն ուրվագծող նյութեր. կյանքը և գործունեությունը լուսաբանող ակնարկ՝ պրոֆ. Ս. Ջաքարյանի հեղինակությամբ, նրա՝ փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցմանը ներկայացրած «XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն» մենագրության վերաբերյալ անվանի լեզվաբանների՝ ակադեմիկոսներ Էդ. Աղայանի և Գ. Ջահուկյանի կարծիքները:

Վերջիններիս հրապարակումը, Զ. Միրզոյանի մենագրության գիտական արժեքն ընդգծելուց բացի, ունի նաև հետևյալ միտումը. նախ՝ գիտական հանրությանը ներկայացնել նշանավոր այդ գիտնականների ժամանակին չտպագրված կարծիքները, որոնք վկայում են նրանց գիտական լայն մտահորիզոնի և հետաքրքրությունների շրջանակի մասին: Երկրորդ՝ ընդգծել, որ դրանցում արծարծված հայագիտությանն ու հումանիտար գիտությունների մեթոդաբանությանն առնչվող հարցերն այսօր էլ չեն կորցրել իրենց տեսական և գործնական նշանակությունը. այս առումով հատկապես ուշագրավ են պաշտոնական ընդդիմախոս ակադ. Գ. Ջահուկյանի՝ փիլիսոփայության պատմության, ի մասնավորի հայ փիլիսոփայության պատմության ուսումնասիրության անհրաժեշտության, հայ մշակույթին առնչվող հարցերի քննության ընթացքում հումանիտար տարբեր գիտակարգերի ու հետազոտությունների արդյունքների համադրման, անցյալի տեսական մտքի ուսումնասիրության ընթացքում գիտական անաչառությունն ապահովող մեթոդաբանական մոտեցումների վերաբերյալ կատարած հարցադրումները: Երրորդ՝ փաստել այն իրողությունը, թե վաստակաշատ գիտնականներն ինչպիսի վերաբերմունք են ունեցել երիտասարդ գիտնականների և առհասարակ հայագիտության ասպարեզ մուտք գործող հետազոտողների հանդեպ:

Կենսամատենագիտության երկրորդ բաժինը կազմում է Զ. Միրզոյանի աշխատությունների և նրա մասին եղած նյութերի մատենագիտական նկարագրության ժամանակագրական ցանկը: Այն ներկայացված է մասնաբաժիններով, որոնց հիմքում ընկած են նյութերի հրատարակության տեսակային և ժանրային առանձնահատկությունները՝ մենագրություններ, հրապարակած ժողովածուներ և աշխատություններ, հանրագիտարանային նյութեր, ժողովածուներում և այլ

գրքերում տպագրված հոդվածներ, զեկուցումներ, զեկուցման դրույթներ, թարգմանություններ, գիտական հոդվածներ, գրախոսություններ, հարցազրույցներ, հրապարակախոսական նյութեր, զեղարվեստական ստեղծագործություններ, խմբագրած աշխատանքներ, նրա գիտական աշխատանքների մասին գրախոսություններ, կյանքի և գործունեության մասին հրապարակումներ: Գրախոսություններն առանձնացված են, սակայն հղումներով կապվում են գրախոսվող նյութերին:

Նյութերը նկարագրված են «Տպագիր երկերի մատենագիտական նկարագրության» 7.1-84 պետստանդարտին համապատասխան: Դրանք համարակալված են, ժամանակագրական դասավորության ներսում պահպանված է խորագրերի (վերնագիր կամ հեղինակ) այբբենական հերթականությունը: Վերնագրերում կամ դրանց կից առկա են քառակուսի փակագծերով հավելումներ (անձնանուններ, ժանոթագրություններ), որոնք կապ չունեն բնագրի հետ և արվել են կազմողի կողմից՝ տեղեկատվության շրջանակի ընդլայնման նպատակով:

Նյութերի բնագրային խորագրերը թարգմանաբար ներկայացված են հայերեն կամ ռուսերեն: Մատենագիտությանն ուղեկցում են նշված երկու լեզուներով տեղեկատվական ցանկեր՝ «Յ. Միրզոյանի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը», «Անվանացանկ», «Վերնագրային այբբենական ցանկեր» («Յ. Միրզոյանի աշխատանքները», «Յ. Միրզոյանի կյանքի և գործունեության մասին»):

Անվանացանկում նշված են մատենագիտական ցանկում ընդգրկված բոլոր անձնանունները՝ թե՛ բնագրային, թե՛ կազմողի կողմից լրացված, բացառությամբ կենսամատենագիտության օբյեկտի (Յ. Միրզոյանի):

Վերնագրային ցանկում քառակուսի փակագծերով նշված են կազմողի ծանոթագրությունները ինչպես հեղինակային գործառույթի (հեղինակ, կազմող, խմբագիր ևն), այնպես էլ աշխատանքի տեսակի (մենագրություն, հոդված, զեկուցում ևն) և դրա՝ այլ հրատարակություններում (հանրագիտարան, ժողովածու ևն) զետեղված լինելու մասին:

## ОТ СОСТАВИТЕЛЯ И РЕДАКТОРА

Биобиблиография профессора Г. К. Мирзояна состоит из двух основных разделов.

В первом разделе собраны материалы, характеризующие Г. Мирзояна как ученого и человека: очерк его жизни и деятельности, написанный проф. С. Закаряном, и отзывы двух видных языковедов, академиков Э. Агаяна и Г. Джаукяна, о его монографии «Критический анализ армянской философской мысли XVII века», которая была представлена на соискание ученой степени доктора философских наук.

Публикация этих отзывов не только подчеркивает научную ценность монографии Г. Мирзояна, но и преследует ряд целей: во первых, познакомить научную общественность с не опубликованными в свое время работами высокоавторитетных ученых, свидетельствующими об их широкой научной эрудиции и о круге их научных интересов. Во-вторых, привлечь внимание к поднятым ими вопросам методологии арменоведения и гуманитарных наук, донныне не утратившим своего теоретического и практического значения; особо примечательны в этом отношении положения официального оппонента акад. Г. Джаукяна о необходимости изучения истории философии, в частности истории армянской философии, о соотношении результатов различных гуманитарных исследований, при обсуждении проблем армянской культуры, о методологических подходах, обеспечивающих научную объективность в процессе изучения теоретической мысли прошлого. В-третьих, показать, как относились эти заслуженные ученые к молодым коллегам и вообще исследователям, вступавшим на поприще арменистики.

Во втором разделе биобиблиографии представлен хронологический перечень трудов Г. Мирзояна и посвященных ученому материалов. Перечень делится на подразделы, в основу которых положен жанровый принцип: монографии, энциклопедические тексты, статьи в сборниках и иных изданиях, доклады, тезисы докладов, переводы, научные статьи, рецензии, интервью, публицистические материалы, художественные произведения, редакторские работы, рецензии на его книги, публикации о жизни и творчестве. Рецензии обособлены, однако снабжены отсылками к рецензируемым работам.

Материалы описаны согласно госстандарту 7.1–84 «Библиографическое описание печатных трудов». Они пронумерованы и расположены с соблюдением хронологического порядка и алфавитной последовательности заглавий или авторов. В заглавиях или при них имеются в квадратных скобках добавления (имена собственные, примечания), которые не связаны с оригиналом и сделаны составителем с целью расширить информационное поле.

Оригинальные заглавия материалов даны также в переводе на армянский или русский языки. К библиографии приложены справочные указатели на двух этих языках: «Основные даты жизни и деятельности Г. Мирзояна», «Именной указатель», «Алфавитный указатель заглавий» («Труды Г. Мирзояна», «О жизни и деятельности Г. Мирзояна»).

В именованном указателе даны все упомянутые в библиографическом перечне имена, в том числе добавленные составителем, за исключением самого Г. Мирзояна.

В перечне заглавий в квадратных скобках помещены примечания составителя как о характере проделанной работы (автор, составитель, редактор), так и о жанре произведения (монография, статья, доклад) и о публикациях в иных изданиях (энциклопедия, сборник и т.д.).



**ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
Դ.Ր. ՊՐՈՖ. Զ.Ղ. ՄԻՐԶՈՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ  
ԳՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ**

- 1940 – ծնվել է մարտի 13-ին, ՀԽՍՀ Նոյեմբերյանի շրջ. Դոստլու  
(այժմ՝ Բարեկամավան) գյուղում
- 1954 – ավարտել է Դոստլուի յոթնամյա դպրոցը
- 1958 – ավարտել է Նոր-Բայազետի (այժմ՝ Գավառ) մանկավարժա-  
կան ուսումնարանը
- 1963 – ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը
- 1966 – ավարտել է ԵՊՀ ասպիրանտուրան «Հայ փիլիսոփայության  
պատմություն» մասնագիտությամբ
- 1966-1967 – ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի բաժնի կրտսեր  
գիտաշխատող
- 1967-1971 – ԵՊՀ փիլիսոփայության ամբիոնի ասիստենտ, ավագ դա-  
սախոս
- 1967 – նրան շնորհվել է փիլիսոփայական գիտությունների թեկնա-  
ծուի գիտական աստիճան
- 1969-1970, 1978-1979 – Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվ. համալսա-  
րանին կից հասարակական գիտությունների դասախոսների  
որակավորման բարձրագման ինստիտուտի ունկնդիր
- 1970 – արժանացել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրի
- 1971-1979, 1981-1987 – ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամ-  
բիոնի դոցենտ
- 1979-1981 – ԵՊՀ-ի ավագ գիտաշխատող
- 1984 – նրան շնորհվել է փիլիսոփայական գիտությունների դոկտորի  
գիտական աստիճան
- 1987 – ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնի պրոֆեսոր
- 1989-2000 – ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնի վարիչ
- 1992-ից առ այսօր – «Բանբեր Երևանի համալսարանի» գիտական  
հանդեսի գլխավոր խմբագիր
- 1994-1997 – Երուսաղեմի հայոց պատրիարքարանի Ալեք և Մարի  
Մանուկյանների անվան ժառանգավորաց վարժարանի և Ըն-  
ծայարանի դասախոս
- 1997-2003 – համատեղությամբ դասավանդել է ս. Էջմիածնի Գևորգ-  
յան հոգևոր ճեմարանում

- 1998-2004** – ԵՊՀ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետի դեկան
- 2004-2009** – ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկան
- 2009** – ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնի պրոֆեսոր
- 1971** – հրատարակել է «Սիմեոն Ջուղայեցի» մենագրությունը
- 1983** – հրատարակել է «XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն» մենագրությունը
- 2001** – հրատարակել է «Հովհաննես Մրջուզ Ջուղայեցի» մենագրությունը
- 2006** – հրատարակել է «Գրիգոր Նարեկացու բառաստեղծական արվեստը» մենագրությունը, որի համար 2008 թ.-ին արժանացել է ՀՀ Թեքեյան մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» մրցանակի

**ОСНОВНЫЕ ДАТЫ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ  
Д-РА ФИЛОСОФСКИХ НАУК,  
ПРОФ. Г. К. МИРЗОЯНА**

- 1940** – родился 13 марта в селе Достлу (ныне Барекамаван) Ноемберянского района Арм. ССР
- 1954** – окончил семилетнюю школу того же села
- 1958** – окончил Педагогическое училище в Нор-Баязете (ныне Гавар)
- 1963** – окончил исторический факультет ЕГУ
- 1966** – окончил аспирантуру ЕГУ по специальности “История армянской философии”
- 1966-1967** – младший научный сотрудник сектора философии и права АН Арм. ССР
- 1967-1971** – ассистент, а позднее старший преподаватель кафедры философии ЕГУ
- 1967** – удостоился ученого звания кандидата философских наук
- 1969-1970, 1978-1979** – слушатель ИПК при МГУ им. М.В. Ломоносова
- 1970** – награжден Почетной грамотой Верховного совета Арм. ССР
- 1971-1979, 1981-1987** – доцент кафедры истории философии ЕГУ
- 1979-1981** – старший научный сотрудник ЕГУ
- 1984** – удостоился ученого звания доктора философских наук
- 1987** – профессор кафедры истории философии ЕГУ
- 1989-2000** – заведующий кафедрой истории философии ЕГУ
- 1992** – назначен и по сей день является главным редактором “Вестника Ереванского университета”
- 1994-1997** – преподавал в Духовной семинарии при Армянской патриархии в Иерусалиме
- 1997-2003** – преподавал в Духовной семинарии Геворкян при св. Эчмиадзине
- 1998-2004** – декан факультета философии, социологии и психологии ЕГУ
- 2004-2009** – декан факультета философии и психологии ЕГУ

- 2009** – профессор кафедры истории философии ЕГУ
- 1971** – опубликовал монографию “Симеон Джугаеци”
- 1983** – опубликовал монографию “Критический анализ армянской философской мысли XVII века”
- 2001** – опубликовал монографию “Ованес Мркуз Джугаеци”
- 2006** – опубликовал книгу “Искусство словотворчества Григора Нарекаци”, удостоенную в 2008 г. премии Культурного общества “Текеян”

ՀՐԱՉԻԿ ՂԱԶԱՐԻ ՄԻՐՁՈՅԱՆԻ  
ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ  
ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԷՋԵՐ  
(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ, ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

СТРАНИЦЫ, ХАРАКТЕРИЗУЮЩИЕ  
ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ  
ГРАЧИКА КАЗАРОВИЧА МИРЗОЯНА  
(БИОГРАФИЧЕСКИЙ ОЧЕРК, РЕЦЕНЗИИ)

## ԱՆՎԱՆԻ ՀԱՅԱԳԵՏՈՒ

(Պրոֆ. Յ. Ղ. Միրզոյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Բանբեր Երևանի համալսարանի» գիտական հանդեսի գլխավոր խմբագիր, ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնի պրոֆեսոր Հրաչիկ Ղազարի Միրզոյանի 70-ամյակը: Նա քաջ հայտնի է հայ մշակույթի և փիլիսոփայության պատմությամբ զբաղվող մասնագետներին՝ որպես տաղանդավոր գիտնական, հայրենամուտ գործիչ և հմուտ մանկավարժ: Նա այն հայագետներից է, ովքեր շարունակելով հայ փիլիսոփայապատմական գիտության հիմնադիրներ Հ. Գաբրիելյանի և Վ. Չալոյանի ազգանվեր գործը, կարողացան մի նոր աստիճանի բարձրացնել հայագիտության՝ այդ տակավին երիտասարդ, բայց և միջազգային ճանաչում ունեցող գիտաճյուղի զարգացումը:

Հ. Միրզոյանը ծնվել է 1940 թ. մարտի 13-ին, ՀԽՍՀ Նոյեմբերյանի շրջանի Դոստլու (ներկայումս՝ Բարեկամավան) գյուղում, սովորել տեղի յոթնամյա դպրոցում, այնուհետև՝ Նոր-Բայազետի (այժմ՝ Գավառ) մանկավարժական ուսումնարանում, որն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ: 1963 թ. գերազանցությամբ ավարտել է համալսարանը և պահվել սովորելու ասպիրանտուրայում հայ փիլիսոփայության պատմության գծով: 1967 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1971-թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1984 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1987-թ. արժանացել պրոֆեսորի կոչման: 1989թ. ընտրվել է ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնի վարիչ, որը ղեկավարել է մինչև 2000 թվականը: 1998թ. նա նշանակվել է ԵՊՀ փիլիսոփայության, սոցիոլոգիայի ու հոգեբանության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, իսկ 2000թ. ընտրվել այդ նույն ֆակուլտետի դեկան և պաշտոնավարել մինչև 2004թվականը: 2004-2009 թթ. եղել է փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկան:

Պրոֆ. Յ. Միրզոյանը բազմաթեղուն գիտնական է: Նրա հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ փիլիսոփայության,

գրականության ու գրատպության պատմության ոլորտները: Իբրև հայ փիլիսոփայության պատմաբան, նա անուրանալի ավանդ է ներդրել հատկապես 17-րդ դարի հայ փիլիսոփայության լուսաբանման ու գնահատման գործում:

1971թ. նա հրատարակել է «Սիմեոն Ջուղայեցի» վերտառությամբ մենագրությունը, որում առաջին անգամ հանգամանորեն վերլուծել է 17-րդ դարի հայ նշանավոր հասարակական-կրոնական գործիչ, փիլիսոփա, տրամաբան, քերական և մանկավարժ Սիմեոն Ջուղայեցու փիլիսոփայական հայացքներն ու գիտամշակութային գործունեությունը: Դա երիտասարդ հայագետի՝ ըստ էության առաջին, բայց և ծանրակշիռ խոսքն էր հայ մշակույթի պատմության մեջ թեև կարևոր, բայց և մինչ այդ փաստորեն անտեսված կամ սխալ գնահատված ժամանակահատվածներից մեկի մասին: Իր այդ մենագրությամբ հեղինակը կարողացավ սասանել հայագիտության ասպարեզում վաղուց հաստատված այն տեսակետը, թե իբր հայ մշակույթի, ի մասնավորի հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ սկսված անկունը տևել է 15-րդ դ. երկրորդ կեսից մինչև 18-րդ դ. երկրորդ կեսը: Նաև զգալով, որ դեռ շատ բան կա անելու 17-րդ դարի հայոց փիլիսոփայական ու մշակութային արժեքները վերհանելու ճանապարհին՝ Զ. Միրզոյանն իրեն բնորոշ համառությամբ շարունակեց գիտական որոնումները: Այո՛, եղան նույնիսկ ճանաչված հայագետներ, ովքեր, մատնանշելով այդ դարի արևմտաեվրոպական տեսական մտքի ակնհայտ նվաճումները, չթաքցրին իրենց թերահավատ վերաբերմունքը մեր ժողովրդի պատմության որքան բախտորոշ, նույնքան և չուսումնասիրված ու թերագնահատված հարյուրամյակի հանդեպ: Բայց երիտասարդ գիտնականը, ավելի շատ անսալով իր ներքին ձայնին, շարունակեց գիտական պրպտումները և որպես իր՝ շուրջ 20-ամյա տքնաջան աշխատանքի ու համառ որոնումների արդյունք 1983 թվականին գիտական հանրության դատին ներկայացրեց «XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն» արժեքավոր մենագրությունը, որն արժանացավ ոչ միայն հայ փիլիսոփայության պատմության, այլև հայագիտության ամենատարբեր մասնագետների (Գ. Ջահուկյան, Ս. Արևշատյան, Վ. Բարխուդարյան, Ա. Մադոյան, Վ. Դիլոյան և ուրիշներ) բարձր գնահատականին: Մեկ տարի անց, որպես դոկտորական ատենախոսություն, Զ. Միրզոյանն այն դրեց հրա-

պարակային պաշտպանության՝ արժանանալով փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի:

2001թ. լույս տեսավ նրա «Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի» մենագրությունը, որում առաջին անգամ, շրջանառության մեջ դրվելով նոր նյութեր, հանգամանորեն լուսաբանվում են 17-18-րդ դդ. նշանավոր մտածող՝ աստվածաբան, փիլիսոփա, տրամաբան, քերական, գեղանկարիչ Հովհաննես Մրքուզ Ջուղայեցու կյանքը, գործունեությունը, գրական ժառանգությունը, փիլիսոփայական, տրամաբանական, հասարակական-քաղաքական և արվեստագիտական հայացքները: Այս աշխատությունն արժեքավոր է նաև նրանով, որ հեղինակը առաջադրում և կիրառում է մեթոդաբանական մի շարք դրույթներ, որոնք հնարավորություն են տալիս վերանայելու և նորովի գնահատելու հայագիտության մեջ արմատավորված որոշ տեսակետներ:

Նկատի ունենալով 17-րդ դարի հայ փիլիսոփայության պատմությանը նվիրված նրա հետազոտությունները՝ վստահաբար կարող ենք ասել, որ պրոֆ. Յ. Միրզոյանի գիտական աշխատությունների շնորհիվ այսօր մենք ավելի ամբողջական ու խոր պատկերացում ունենք այդ շրջանի հայ մշակույթի և, հատկապես, հայ փիլիսոփայության մասին:

Սակայն, նրա գիտական հետաքրքրությունների ոլորտը չի սահմանափակվում միայն 17-րդ դարով. իր բազմաթիվ հոդվածներում նա անդրադառնում է միջնադարյան հայ փիլիսոփաների և մշակութային գործիչների տեսական ժառանգությանն առնչվող հարցերին:

Պրոֆ. Յ. Միրզոյանի գիտական գործունեության առանձին էջ են կազմում աղբյուրագիտական հետազոտությունները և բնագրերի հրատարակումը: Նրանք, ովքեր առնչվել են գիտական գործունեության այս ոլորտին, կարող են վկայել, թե ինչ տիտանական ջանքերի շնորհիվ է լույս աշխարհ գալիս մի որևէ բնագրի քննական տեքստը: Իսկ առանց այդպիսի աշխատանքի հնարավոր չէ ո՛չ հայագիտության հետազա գարգացումը, ո՛չ էլ մեր մշակութային անձնագրի պատրաստումը: Հետաքրքիր է նշել, որ պրոֆ. Յ. Միրզոյանը հրատարակության է պատրաստել ոչ միայն շրջանառության մեջ չգտնվող բնագրեր (օրինակ՝ Ստեփանոս Դաշտեցու «Ջրույց-բանավեճերը»), այլև մասնագիտական գրականության մեջ անանուն կամ հեղինակային պատկանելությամբ վիճահարույց համարվող բնագրեր, ինչը նրան ստիպել է անցկացնել լրացուցիչ հետազոտություններ և ի վերջո հայտնաբերել



բնագրերի իսկական հեղինակներին: Դրանցից մեկը անանուն համարվող «Լուծումը «Սահմանաց գրոց» երկն էր, որի հեղինակը, պրոֆ. Միրզոյանի համոզմամբ, Հովհաննես Սարկավազ Իմաստասերն է (Հովհաննես Սարկավազ Իմաստասեր: Լուծումը «Սահմանաց գրոց», աշխատասիր. Հ. Միրզոյանի և Ա. Մադոյանի, Եր., 2004): Իսկ մյուսը՝ «Համառատիւք բան խրատու» բարոյափիլիսոփայական մեծարժեք աշխատությունն է, որը, ըստ պրոֆ. Միրզոյանի ապացույցների, անառարկելիորեն պատկանում է Գրիգոր Նարեկացու գրչին (Գրիգոր Նարեկացի: Համառատիւք բան խրատու, «Մատենագիրք հայոց», ԺԲ հատոր, Անթիլիաս, Լիբանան, 2008):

Վերջին տարիներին պրոֆ. Հ. Միրզոյանի գիտական գործունեության մեջ առանձնահատուկ տեղ ունեն հայ մեծագույն բանաստեղծ և մտածող Գրիգոր Նարեկացու կյանքին, գործունեությանն ու գրական ժառանգությանը նվիրված ուսումնասիրությունները: Վերծանելով բանաստեղծի գլուխգործոց «Մատեան ողբերգութեան» ստեղծագործության մեջ առկա մի շարք ծածկագրություններ՝ գիտնականն ի հայտ է բերել նրան վերաբերող նոր փաստեր ու տեղեկություններ, որոնք հնարավորություն են տալիս նորովի գնահատելու ինչպես նրա անցած ստեղծագործական ուղին, այնպես էլ Մատոյանի ստեղծման շարժառիթներն ու նպատակները: Ըստ այդմ՝ պրոֆ. Հ. Միրզոյանին հաջողվել է լուծել Նարեկացու գրական ժառանգության հետ կապված առանձին վիճելի հարցեր: Գիտական հասարակայնությունն առանձնապես բարձր է գնահատել Նարեկացու բառաստեղծական արվեստին նվիրված նրա հետազոտությունները, որոնք լույս են տեսել նաև առանձին գրքով (Գրիգոր Նարեկացու բառաստեղծական արվեստը, Եր., 2006) և 2008 թ. արժանացել ՀՀ Թեքեյան մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» երկամյա մրցանակի:

Պրոֆ. Հ. Միրզոյանը թարգմանել է նաև մասնագիտական գրքեր, որոնցից առանձնապես նշելի է Թ. Դիլանյանի հետ թարգմանած «Փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ» (Եր., 1979) մեծածավալ ուսումնական ձեռնարկը:

Ամեն մի գիտնական ունի հետազոտության իր սկզբունքներն ու չափանիշները, որոնցում դրսևորվում են նաև նրա մարդկային որակները, սուբյեկտիվ վերաբերմունքը հետազոտության առարկայի հանդեպ: Մշակույթի և փիլիսոփայության պատմությունն ուսումնասիրելն այնքան էլ դյուրին գործ չէ. կարելի է կեղծ հարցերով ու չա-

փանիշներով հարմարեցնել անցյալը ներկային կամ ներկայի պահանջները պարտադրել անցյալին: Պրոֆ. Յ. Միրզոյանի համար հետազոտությունը երկխոսություն է անցյալի և ներկայի միջև, հասկացման մի հոգևոր գործընթաց տարբեր արժեքներ ու իդեալներ ունեցող սերունդների միջև: Համոզված լինելով, որ հայոց մշակույթի և փիլիսոփայության զարգացումը, իր ժամանակավոր անկումներով հանդերձ, եղել է անընդհատ ու միասնական գործընթաց՝ պրոֆ. Յ. Միրզոյանն անձամբ կամ իր բազմաթիվ սաների ջանքերով ձգտում է բացահայտել հենց այդ անընդհատականությունը, որը հատկապես մեր օրերում ունի ոչ միայն գիտական ու մշակութային, այլև քաղաքական նշանակություն: Օրինակ, իր «Հովհաննես Մրջուզ Ջուղայեցի» մենագրության մեջ նա հայոց պատմության 17-18-րդ դարերի ժամանակահատվածն անվանում է ջուղայական, ինչը մեթոդաբանական կարևոր նշանակություն ունի թե՛ հայոց պատմության և թե՛ մշակույթի զարգացման ընթացքի տրամաբանությունը հասկանալու համար: Այսպիսի մեթոդաբանական դիրքորոշումը հնարավորություն է տալիս ճիշտ բացատրելու ինչպես հայ ազգային-ազատագրական շարժումները, այնպես էլ 18-րդ դարի երկրորդ կեսին հեռավոր Հնդկաստանում հայ լուսավորական փիլիսոփայության առաջացման հասարակական-քաղաքական պայմաններն ու տեսական-գաղափարական ակունքները:

Գիտնականը (առավել ևս հայագետը) պիտի լինի հայրենասեր, բայց ոչ երբեք ի հաշիվ գիտական անաչառության և բարեխղճության: Պրոֆ. Միրզոյանն անաչառ է որպես գիտնական և հայրենասեր, որպես հայագետ: Խորհրդային տարիներին, երբ հայագետները, ի տարբերություն հարևան հանրապետությունների իրենց գործընկերների, գրեթե իրավունք չուներին վիճահարույց հարցերի քննարկման ժամանակ «նեղացնել» ինտերնացիոնալիստական փետուրներով զարդարված ազգայնամոլ հետազոտողներին, հատկապես մշակութային խաչագողներին, պրոֆ. Յ. Միրզոյանը, հաղթահարելով հայրենական և միութենական «ինտերնացիոնալիստ գործիչների» դիմադրությունը, համարձակություն ունեցավ հրապարակավ քննադատելու նրանց հակահայկական բնույթ ունեցող տեսակետները: Առհասարակ, տարբեր պետություններում և քաղաքներում մասնակցելով միջազգային և այլ կարգի գիտաժողովների՝ նա կարողացել է գիտական հանրությանը պատշաճ մակարդակով ներկայացնել հայ փիլիսոփայության և

մշակույթի արժեքները՝ բարձր պահելով հայագիտության պատիվը: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել 1980թ. Դավիթ Անհաղթի 1500-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի կազմակերպմանը:

Հարկավ դեռ երկար կարելի է խոսել պրոֆ. Յ. Սիրզոյանի գիտական վաստակի շուրջ, բայց ցանկանում եմ մի քանի խոսք ասել նաև նրա մարդկային արժանիքների մասին, որոնք հատկապես մեր օրերում ունեն բացառիկ նշանակություն:

Պրոֆ. Սիրզոյանը երբեք չի եղել «կաբինետային» գիտնական. ուսումնասիրելով անցյալի իրողությունները՝ նա չի մոռացել ներկայի հոգսերը: Ընդհակառակը՝ եղել է հրապարակախոս գիտնական, իր երկրի քաղաքացին, որն անտարբեր չի մնացել հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ, փորձել է օրախնդիր հարցերի վերաբերյալ հրապարակավ ներկայացնել իր պատկերացումներն ու տեսակետները: Հրապարակախոսական հոդվածներով բազմիցս հանդես գալով համամիութենական և հանրապետական մամուլում՝ նա քննարկման առարկա է դարձրել բարոյական, ազգային, մշակութային բնույթի կենսահույզ հարցեր, որոնք լայն արձագանք են գտել ընթերցողների շրջանում: Այդ հոդվածներում երևում է երկրի ճակատագրով, ժողովրդի հոգսերով ապրող քաղաքացու մտահոգությունը: Պատահական չէ, որ դարաբաղյան շարժման տարիներին այդպիսի խառնվածք ու բնավորություն ունեցող գիտնականը չկարողացավ «հանգիստ նստել»: Նա ձգտում էր ինչ-որ ձևով իր լուսնան ներդնել ազգային-ազատագրական շարժման մեջ: Ըստ այդմ՝ պրոֆ. Ս. Ջոլյանի հետ կազմեց և հրապարակեց «Нагорный Карабах и вокруг него: глазу не независимых наблюдателей» (Եր., 1991) օտարազգի հեղինակների հոդվածների մեծարժեք ժողովածուն, որը մինչև օրս էլ սիրված ու փնտրված գիրք է:

Գիտնականներից ոմանք առավելապես մտածում են իրենց հաջողության, շահի և փառքի մասին, մինչդեռ մյուսները՝ նաև իրենց գործընկերների, հատկապես երիտասարդ գիտնականների մասին: Ինքն իր համար ապրող գիտնականի եսասիրությունն ինչ-որ տեղ և ինչ-որ ժամանակ սկսում է վնասել գիտության զարգացմանը, խաթարում գիտական հանրության բարոյահոգեբանական մթնոլորտը: Գիտնականը մեծ է, եթե մտածում է ոչ միայն անձնական հաջողության, այլև իր ընտրած մասնագիտության հետագա զարգացման, երիտասարդ կադրերի պատրաստման մասին: Գիտնականը մեծ է, եթե չի

վախենում «սեփական ուսերի վրա բարձրացնել» իր աշակերտներին, եթե Նիցշեի պես կարող է ասել՝ «Պուք ձեզ դեռ չէիք փնտրում, երբ գտաք ինձ: Այդպես են վարվում բոլոր հավատացյալները. այդ պատճառով էլ հավատը շատ քիչ բան է նշանակում: Այժմ ես հրամայում եմ կորցնել ինձ և գտնել ձեզ. երբ բոլորդ հրաժարվեք ինձնից, ես կվերադառնամ դեպի ձեզ»: Պրոֆ. Յ. Միրզոյանն այն գիտնականներից է, որ ունի «հզոր ուսեր» և այն ուսուցիչներից է, որ կարող է «հրամայել» կորցնել իրեն ուրիշի ինքնահաստատման համար: Նա անկեղծորեն ուրախանում-հպարտանում է իր սաների հաջողությամբ, որովհետև դա համարում է նաև իր անձնական և մասնագիտական հաջողությունը: Խրախուսում և նպաստում է բոլոր նրանց, ովքեր ուզում են մտնել «գիտության տաճար»: Վերջին տարիներին, համընդհանուր ճգնաժամի պայմաններում, երբ արժեզրկվում էր ամեն ինչ, այդ թվում գիտական գործունեությունը, թվում էր, թե պրոֆեսորը պիտի հաշտվեր տխուր իրականության հետ: Սակայն միայն վերջին տասնհինգ տարում նրա անմիջական ղեկավարությամբ պաշտպանվել են դոկտորական և թեկնածուական բազմաթիվ ատենախոսություններ, նրա խմբագրությամբ լույս են տեսել մի շարք աշխատություններ: Սկսած 1992 թվականից՝ նա «Բանբեր Երևանի համալսարանի» գիտական հանդեսի գլխավոր խմբագիրն է և հսկայական աշխատանք է կատարում ինչպես դրա կանոնավոր հրատարակման, այնպես էլ գիտական մակարդակի բարձրացման համար:

Գիտախմբագրական գործունեության հետ զուգահեռ Յ. Միրզոյանը դասավանդում է Երևանի պետական համալսարանում: 1994-1997 թթ. Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արքեպս. Մանուկյանի հրավերով նա համալսարանի ղեկավարության կողմից գործուղվել է Երուսաղեմ՝ դասավանդելու Ալեք և Մարի Մանուկյան ժառանգավորաց վարժարանում և Ընծայարանում: Իսկ 1997-2003 թթ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի հրավերով համատեղության կարգով դասավանդել է նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում: Նա 013 մասնագիտական գիտխորհրդի նախագահի տեղակալ է ավելի քան 10 տարի, նաև Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի խորհրդի անդամ է: Պրոֆ. Յ. Միրզոյանը համալսարանի 80-ամյակի տոնակատարության և «Բանբեր Երևանի համալսարանի» գիտական հանդեսի 40-ամյակի առիթներով պարգևատրվել է ԵՊՀ ոսկե հուշամեդալներով:

Գիտնականի համար 70 տարին ոչ այնքան իր գիտամանկավարժական գործունեության արդյունքների ամփոփման տարիք է, որքան՝ նոր արարումների սկիզբ: Անվանի հայագետի կյանքում սկսվում է մի նոր պատասխանատու փուլ. մենք վստահ ենք, որ այսուհետև ևս նա ջանք ու եռանդ չի խնայի հայրենական գիտության հեղինակության բարձրացման, հայագիտության և հայ փիլիսոփայական մտքի զարգացման համար:

**Ս.Ա. ԶԱԲԱՐՅԱՆ**

*ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնի վարիչ,  
փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

**Յ. Ղ. ՄԻՐԶՈՅԱՆԻ «XVII դարի ՀԱՅ ՓԻԼԻՍՈՓՈՒՅԱԿԱՆ  
ՄՏՔԻ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ»  
ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ես մեծ հետաքրքրությամբ կարդացել եմ Յ. Միրզոյանի «XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն» մենագրությունը, որը ներկայացված է պաշտպանության՝ փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճանի համար, ինչպես և՛ ավտոռեֆերատը, որը ներկայացնում է մենագրության հիմնական դրույթների ամփոփումն ու համառոտությունը:

Իբրև «Հայ լեզվաբանության պատմության» հեղինակ, ես ուսումնասիրել եմ 5-ից մինչև 20-րդ դարերի, հետևաբար նաև 17-րդ դարի լեզվաբանական-քերականական աշխատությունները: Եվ որովհետև հին և միջին դարերի, ինչպես և մասամբ նոր ժամանակների լեզվաբան-քերականագետները մեծ մասամբ նաև ժամանակի փիլիսոփաներն են եղել, ապա կարող եմ ինձ համարել նաև հայ փիլիսոփայական մտքի պատմության որոշ չափով գիտակ հայագետ և թույլ տալ ինձ՝ դատողություններ անելու Յ. Միրզոյանի աշխատության մասին:

Ամենից առաջ, ինձ ուրախացնում է, որ դիսերտացիայի հեղինակը չի բավարարվել հրապարակի վրա եղած նյութերի ուսումնասիրությամբ, այլ իր պրպտումներով ձգտել է Մատենադարանի, առայժմ չհրապարակված ձեռագրերից ու զանազան արխիվներից նոր նյութեր գտնել և գիտական քննության առարկա դարձնել: Նրա քննության առած այդպիսի նյութերից շատերը նոր լույս են սփռում 17-րդ դարի ոչ միայն փիլիսոփայական մտքի պատմության, այլև առհասարակ այդ դարի ողջ հայ մշակույթի պատմության վրա: Այս տեսակետից գնահատելով մենագրությունը՝ ես գտնում եմ, որ նա շատ նորություններ է բերում, ըստ որում այդ նորությունները, ամբողջությամբ վերցրած, հեղինակի երկարամյա որոնումների, նրա տքնաչան գիտական հետազոտությունների միանգամայն արգասավոր արդյունքն են:

Ինձ համար առանձնապես կարևոր է աշխատության գաղափարական ուղղվածությունը: Ձերձ մնալով ազգային սնապարծության, ինչպես և ազգային նիհիլիզմի տենդենցներից, որոնք, ցավոք սրտի, երբեմն-երբեմն իրենց թեկուզ և հեռավոր արտահայտությունն են

գտնում հայագիտական որոշ աշխատություններում, դիսերտանտը մարքսիզմ-լենինիզմի տեսությամբ է առաջնորդվել, քննության առնվող երևույթները գնահատել այդ տեսության լույսով և դրանով իսկ հանգել օբյեկտիվորեն ճշմարիտ հետևությունների:

Վերջապես, այս կարգի աշխատություններին ներկայացվող կարևորագույն պահանջներից մեկն ինձ համար պատմական հայեցակետի հետևողական կիրառությունն է. առանց պատմական հայեցակետի պատմական ուսումնասիրություն լինել չի կարող: Այս տեսակետից ևս աշխատությունը բնութագրվում է միանգամայն դրականորեն: Մշակույթի գործիչների գործունեությունը, նրանց աշխատությունների և դրանց մեջ առաջ քաշված դրույթների, փիլիսոփայական ըմբռնումների և ուսմունքների և այլնի ուսումնասիրությունը կատարված ու գնահատված են պատմական խիստ հետևողական հայեցակետով, որով մենագրությունը դառնում է իսկապես պատմականորեն զարգացող երևույթի, տվյալ դեպքում փիլիսոփայական մտքի մեկդարյա պատմության խորապես գիտական հետազոտությունը:

Ես ձեռնպահ եմ մնում գրքում արծարծված և լուծված կամ գոնե ընդհանուր գծերով բնութագրված՝ փիլիսոփայության պատմության առանձին խնդիրների մասին խոսելուց, նկատի առնելով, որ դիսերտացիան պաշտպանվելու է մեր հանրապետության լավագույն փիլիսոփաներից կազմված հզոր գիտական խորհրդում և այդ մասնագետներին եմ թողնում ասելու իրենց խոսքը: Իբրև հայ մշակույթի պատմությամբ զբաղված հայագետ, ես համարձակվում եմ ասելու միայն, որ Զ. Միրզոյանի մենագրությունը խոշոր ներդրում է հայ փիլիսոփայական մտքի պատմության ուսումնասիրության բնագավառում: Այդ գիրքը ներկայացնում է 17-րդ դարի հայ փիլիսոփայական մտքի ամբողջական և առայժմ սպառիչ ուսումնասիրությունը, ըստ որում շատ հարցեր քննված ու լուսաբանված են նորովի՝ փաստերի բազմակողմանի ու խորապես գիտական վերլուծության հիման վրա: Ելնելով իմ այս գնահատականից էլ՝ ես գտնում եմ, որ Զրաչիկ Ղազարի Միրզոյանը միանգամայն արժանի է գիտական այն աստիճանին, որ հայցում է:

**ԷՂՈՒՐԴ ԲԱԳՐՍԻ ԱՂԱՅԱՆ**

ՀՍՄՀ ԳԱ ակադեմիկոս

28.09.1984թ.

**Հ. Ղ. ՄԻՐԶՈՅԱՆԻ «XVII դարի ՀԱՅ ՓԻԼԻՍՈՓՈՍՈՒԿԱԿԱՆ  
ՄՏՔԻ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ»  
ԴՊԿՏՈՐԱԿԱՆ ԴԻՍԵՐՏԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ**

Փիլիսոփայության պատմությունը իր բնույթով հավասարաբժեք չէ գիտության մյուս բնագավառների պատմությանը. եթե, օրինակ, ֆիզիկոսի համար պատմության հարցերի ուսումնասիրությունը անմիջական անհրաժեշտություն չէ, ապա փիլիսոփայի համար փիլիսոփայության պատմության իմացությունը նրա աշխատանքի անհրաժեշտ նախապայմանն է: Այն միաժամանակ ընդհանուր հետաքրքրություն է ներկայացնում, որովհետև տալիս է աշխարհընկալման և աշխարհնոտեցման փոփոխությունների պատմությունը: Այս բանը շատ վաղ է գիտակցվել, և փիլիսոփայության պատմությունը վաղուց ի վեր է դարձել մարդկային մտքի պատմության հիմնական բնագավառը: Մեր օրերում փիլիսոփայության ընդհանուր պատմության հետ միասին ուսումնասիրության լայն առարկա են դառնում նաև առանձին ժողովուրդների արտադրանքի պատմության հարցերը, և այդ ոչ միայն այնպիսի ժողովուրդների դեպքում, ինչպիսիք են հույները, հնդիկները, չինացիները, առանց որոնց չի կարելի պատկերացնել փիլիսոփայության վաղ շրջանի պատմությունը, այլև այնպիսի ժողովուրդների դեպքում, որոնց ինքնուրույն փիլիսոփայական ավանդույթի գոյությունը փիլիսոփայության շատ պատմաբանների մտքով երկար ժամանակ ընդհանրապես չի էլ անցել: Հայ փիլիսոփայության պատմության, որպես ինքնուրույն գիտակարգի, անցած կարճատև ուղին ցույց է տալիս այդ ուղղությամբ կատարվածի ողջ կարևորությունը և հետագա ուսումնասիրությունների բացարձակ անհրաժեշտությունը:

Հայ փիլիսոփայության պատմությունը հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն որպես համաշխարհային փիլիսոփայության պատմության բաղկացուցիչ մաս, այլև որպես հայագիտության և հայ մշակույթի պատմության ինքնին հասկանալի մի հատված: Այս առումով հայ փիլիսոփայության պատմաբանը պետք է լավ իմանա և՛ այս, և՛ այն, որպեսզի կարողանա մի կողմից՝ ցույց տալ հայ փիլիսոփա-



յության տեղն ու դերը համաշխարհային փիլիսոփայության պատմության մեջ, նրա բերած նորություններն ու ինքնուրույն ձեռնարկումները, մյուս կողմից՝ այդ պատմությունը կապել հայ ժողովրդի հոգևոր մշակույթի պատմության հետ, բացահայտել վերջինիս մեջ խաղացած դերը: Չենք կարող չնշել, որ այս երկու խնդիրները միշտ չէ, որ հավասար չափով են լուծվում հայ փիլիսոփայության պատմաբանների կողմից, բայց որ նրանց կատարած ամեն մի քայլ մոտեցնում է այդ խնդրի լուծմանը, չենք կասկածում: Այս առումով չի կարելի չողջունել ամեն մի նոր գործ, որ լրացնում է բաց տեղերը, դնում և լուծում նոր պրոբլեմներ, տալիս հարցերի նոր մեկնաբանություններ: Չենք այս առումով պետք է ընդունել և գնահատել Հ. Միրզոյանի՝ պաշտպանության ներկայացրած մենագրությունը, որ, հենց սկզբից ասենք, կարևոր ավանդ է հայ փիլիսոփայության պատմության գանձարանը:

Հ. Միրզոյանի արծարծած փիլիսոփայական համեմատաբար նեղ հարցերի վերկուծությունն ու գնահատումը թողնելով մեր փիլիսոփա կոլեգաներին՝ մենք այստեղ կփորձենք ցույց տալ այն ընդհանուր դրականը, որ բնորոշում է պաշտպանության ներկայացված աշխատությունը:

1. Առաջին անգամ հայ փիլիսոփայության պատմության մեջ հանդես է գալիս մի ծավալուն աշխատություն, որտեղ համակողմանիորեն ուսումնասիրված է 17-րդ դարի հայ փիլիսոփայական մտքի պատմությունը: Հայ փիլիսոփայության պատմության համեմատաբար ամբողջական ընդգրկում ունեցող այնպիսի աշխատություններում, ինչպիսիք են Հ. Գաբրիելյանի «Հայ փիլիսոփայական մտքի պատմությունը» և Վ. Չալոյանի «Հայոց փիլիսոփայության պատմությունը (հին և միջին դարեր)», 17-րդ դարին նվիրված հատվածները, կարելի է ասել, միայն նախնական ուրվագծերի բնույթ ունեն, իսկ մյուս կարգի ուսումնասիրությունները նվիրված են միայն առանձին հեղինակների և առանձին հարցերի: Հ. Միրզոյանին հաջողվել է ստեղծել մի աշխատություն, որ գրեթե սպառիչ գաղափար է տալիս 17-րդ դարի հայ փիլիսոփայության ակունքների, արծարծած պրոբլեմների ու գաղափարների, կապերի ու հարաբերությունների մասին, ըստ ամենայնի պարզում նրա գրաված տեղը հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ, բացահայտում այն արժեքավորը, որ բերել է այդ դարի հայ փիլիսոփայական միտքը իր ժամանակի փիլիսոփայական

ընդհանուր պրոբլեմատիկայի մեջ: Հովհաննես Ջուղայեցու, Ստեփանոս Դաշտեցու, Հովհաննես Հոլովի, Սատթեսու և Դուկաս Վանանդեցիների հայացքների քննությունը փաստորեն առաջին փորձն է, իսկ Սիմեոն Ջուղայեցու, Ստեփանոս Լեհացու, Կղեմես Գալանոսի հայացքների քննությունը, թեև ոչ առաջին անգամ, բայց նոր որակ է ստանում՝ հանդես գալով ամբողջական շղթայի և պրոբլեմատիկայի ամբողջականության մեջ:

2. Ինչպես նշել ենք, հայ փիլիսոփայության պատմությունը հայ հոգևոր մշակույթի պատմության բնագավառներից մեկն է, և նրանով զբաղվողը պետք է լավ կողմնորոշվի հարակից գիտությունների պատմության մեջ, լավածանոթ լինի հայագիտության, որպես գիտությունների մի ամբողջության, ընդհանուր ընթացքին, կարողանա այդ բոլորը քննել ժամանակի հասարակական-տնտեսական հարաբերությունների հետ սերտորեն կապված: Առանց վարանելու կարելի է ասել, որ Հ. Միրզոյանի աշխատությունը այս տեսակետից լավ օրինակ է: 17-րդ դարի տնտեսական, քաղաքական և մշակութային պատմությունը նա ներկայացնում է հմտորեն, առանձին դեպքերում ցուցաբերում նոր մոտեցում և ներքաշում նոր փաստեր՝ այդ բոլորը ծառայեցնելով իր հիմնական նպատակին: Սկզբունք ունենալով՝ որ եթե բազիսում կատարված փոփոխությունները համապատասխանաբար դրսևորվում են վերնաշենքում, ապա իդեոլոգիայի բնագավառում հանդես եկող նոր երևույթները պետք է համապատասխան հիմքեր ունենան, - Հ. Միրզոյանը կատարում է որոնումներ և հաճախ մատնանշում այնպիսի փաստեր, որոնք վրիպել են նախորդ հետազոտողների ուշադրությունից: Նա ընդհանրապես լավատեղյակ է փիլիսոփայության հարակից բնագավառների պատմությանը և կարողանում է այստեղ էլ նոր փաստեր մատնանշել: Այս բանը հատկապես կարևոր է, եթե նկատի առնենք, որ 17-րդ դ. գործիչները նեղ մասնագետներ չեն, այլ, վերածննդի գործիչների նման, լայն հետաքրքրությունների տեր մարդիկ. Սիմեոն Ջուղայեցին, օրինակ, էական հետք է թողել ոչ միայն փիլիսոփայության և տրամաբանության պատմության մեջ, այլև հայ մշակույթի ուրիշ բնագավառներում, այդ թվում՝ լեզվաբանության պատմության մեջ: Հ. Միրզոյանը լավ է նկատել, որ հայերի փիլիսոփայական գիտելիքները և փիլիսոփայական հայացքները քննարկելիս չի կարելի չորանցել այդ բնագավառի թարգմանական գրականությունը, որ հաճախ էական դեր է խաղացել քննվող հեղինակների

հայացքների ձևավորման մեջ: Թարգմանական գրականության նրա քննությունն այս տեսակետից էական է և օրգանական անհրաժեշտություն է ներկայացնում: 3. Միրզոյանը հետաքրքրական կարծիքներ է հայտնում իր նյութի հետ կողմնակիորեն առնչվող այնպիսի հարցերի մասին, ինչպիսիք են միարարական շարժումը, հայ-վրացական փիլիսոփայական առնչությունները, բուն Հայաստանի և գաղութների փոխհարաբերությունը և այլն:

3. 3. Միրզոյանը իր ուսումնասիրության մեջ ներքաշել է նոր աղբյուրներ և նոր նյութեր: Մասնավորապես պետք է նշել նրա լավատեսողականությունը 17-րդ դ. փիլիսոփայական ձեռագիր աղբյուրներին, որոնք պարունակում են հետաքրքրական շատ տվյալներ և օգնում լուծելու այնպիսի հարցեր, որոնք բաց են մնում միայն տպագիր աղբյուրների օգտագործման դեպքում: Այս հանգամանքն էլ առաջ է բերում բանասիրական յուրահատուկ խնդիրներ, որոնք չլուծելու դեպքում հետազոտողը կանգնում է անհավաստի լինելու վտանգի առջև: Կարելի է ասել, որ 3. Միրզոյանը ի հայտ է բերում բանասիրական հմտություն, իր աշխատության մեջ արժարժում և լուծում տեքստաբանական ու բանասիրական մի շարք հարցեր: Այս բանում նրան օգնում է գրաբարի լավ իմացությունը, որը քիչ կարևոր չէ գրաբարագիր հեղինակների ճիշտ գնահատման հարցում: Աշխատության այս էջերում Միրզոյանը խոսում է բանասիրական հարցերի մասին, և նրա լուծումները հիմնականում համոզիչ են: Եթե նա բանավեճի մեջ է մտնում այս կամ այն հետազոտողի հետ, ապա ճշմարտությունը սովորաբար նրա կողմն է. նրա փաստարկները համոզիչ են, եզրահանգումները՝ ճիշտ:

4. Գիտության այս կամ այն բնագավառի պատմաբանը իր առջև դրված խնդիրը լուծելիս կարող է ընտրել երկու ուղի: Մի ուղին, այսպես կոչված, կեղծ քննադատական մոտեցումն է, այն դեպքը, երբ գիտության պատմաբանը քննարկում է տվյալ շրջանի հեղինակներին ու նրանց գործերը՝ ելնելով գիտության ժամանակակից վիճակից ու պրոբլեմներից և նրանց մոտ անընդհատ նորանոր բացեր ու թերություններ է հայտնաբերում:

Երկրորդ ուղին այն է, երբ գիտության պատմաբանը փորձում է հասկանալ ժամանակի ոգին, այդ ժամանակի հարցերն ու խնդիրները, դրանք գնահատել օբյեկտիվորեն և, որ ամենակարևորն է, ցույց

տալ այն նորը, որ բերում է տվյալ հեղինակը կամ նրա տվյալ գործը: Առաջին դեպքում, երբ գիտության պատմաբանի խնդիրը հեշտ է, և նա հեղինակին քննում է անկախ պատմական պայմանավորվածություներից, կարող է հարկ եղած չափով չիմանալ նախորդ շրջանների պատմությունը: Երկրորդ դեպքում այդպիսի իմացությունը պարտադիր է, որովհետև նորի բացահայտումը նշանակում է հնի լավ իմացում. արդի գիտելիքները նա պետք է դասավորի ըստ նրանց ձեռքբերման պատմական հաջորդականության ու ժամանակագրական որոշակի կարգի, այն էլ պատմական ընդհանուր պայմանավորվածության ֆոնի վրա: 3. Միրզոյանն ընտրել է երկրորդ ուղին՝ խուսափելով քննարկվող հեղինակների հայացքների ինչպես արխաիզացիայից, այնպես էլ մոդեռնացումից: Եթե գիտության պատմաբանը գործ ունի որևէ ժողովրդի գիտության տվյալ բնագավառի հետ, նրա խնդիրը ավելի է բարդանում, որովհետև նա պետք է ցույց տա և՛ այն նորը, որ տվյալ հեղինակը բերում է տվյալ երկրում, և՛ այն նորը, որ նա բերում է ընդհանրապես, այսինքն՝ նա պետք է դուրս գա տվյալ ժողովրդի պատմության շրջանակներից, խուսափի այն քննելուց որպես փակ համակարգ: Կարծում ենք, որ 3. Միրզոյանը կարողացել է լուծել և այս խնդիրը:

5. Իր բուն նյութի՝ 17-րդ դ. փիլիսոփաների հայացքների քննությունը դիսերտանտը կատարում է բարձր մակարդակով: Այս տեսակետից մենք կմատնանշեինք դիսերտացիայի երկու կարևոր առանձնահատկություն:

Առաջին՝ 17-րդ դ. փիլիսոփաների հայացքների քննությունը դիսերտանտը կատարում է համադրական ձևով, այսինքն՝ ոչ թե ըստ առանձին հեղինակների, այլ ըստ առանձին պրոբլեմների. այսպիսով 17-րդ դ. փիլիսոփայությունը փորձում է դիտել ամբողջության մեջ: Ենթադրելով, որ ոչ չափով դժվարանում է առանձին հեղինակների պատմական գնահատման հարցը, և տարբերությունները երևում են ոչ այնքան բացահայտ, բայց շահում է գիտության պատմության էությունը, հիմնականը դառնում է պրոբլեմների քննությունը. էլ չենք խոսում այն մասին, որ այս մոտեցումը պահանջում է նյութի խոր իմացություն:

Երկրորդ՝ դիսերտանտը հեռու է այս բնագավառում նկատվող նեղ մոտեցումից: Քիչ չեն այն դեպքերը, երբ փիլիսոփայության պատմաբանը, նեղ կերպով մեկնաբանելով էնգելսի ասույթը փիլիսո-

